Հաստատված է 06.10.2025թ.
_____ Տ. Մելքոնյան

ՀՀ ԿԳՄՄՆ «ԵՐԵՎԱՆԻ Ս. ԽԱՆԶԱԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ Հ. 184 ԱՎԱԳ ԴՊՐՈՑ»

ՊՈԱԿ
2025-2026 ՈՒՍՏԱՐԻ
ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ
Հավանության է արժանացել հայոց լեզվի և գրականության մեթոդական միավորման
10.09.2025թ-ի N 3 նիստում

Նախագծի ղեկավար՝ Տաթևիկ Դումանյան

Թեմա	Առակագրություն
ՈՒսումնական նախագծի անվանումը	Մարդու արժեհամակարգի ձևավորումը առակագրության մեջ
Առարկա	Հայ գրականություն
ՈՒսումնական տարի, կիսամյակ	2025-2026 ուստարի, առաջին կիսամյակ
Դասարաններ	X դասարանի տնտեսագիտական նպատակային խումբ
Տևողություն՝ սկիզբ և վերջնաժամկետ	6 շաբաթ (հոկտեմբերի 6–ից –նոյեմբերի 21)
ՏՏ գործիքներ	Համակարգիչ, գունավոր տպիչ, համացանց, PP
Նախագծի իրականացման փուլեր	1-ին փուլ- Հիմնահարց 2-րդ փուլ- Պլանավորում/ նախագծում 3-րդ փուլ- Որոնում 4-րդ փուլ- Պրեզենտացիա (նախնական) 5-րդ փուլ- Պրեզենտացիա
Նախագծի տեսակը	ներառարկայական
Նախագծի նպատակը	1. Ծանոթանալ առակի՝ որպես ժանր առանձնահատկություններին, տեսակներին, խորապես ուսումնասիրել հայ և համաշխարհային առակագիրներին, և մասնավորապես առակների միջոցով մարդկային արժեհամակարգի ձևավորմանը 2. նպաստել սովորողների ակտիվ գործունեության խթանմանը, 3. ձևավորել հետաքրքրությունների հստակ շրջանակ, 4. սովորողները հմտանան կիրառել ունեցած գիտելիքները, ինչպես նաև ստանան նոր գիտելիքներ, 5. բացահայտել սովորողների անհատական առանձնահատկությունները և խթանել նրանց ստեղծարարական- հետազոտական կարողունակությունները, 6. զարգացնել սովորողների վերլուծական հմտությունները
Նախագծի վերջնարդյունքը	1. Կարողանան ճիշտ գնահատել առակների դերն ու նշանակությունը մարդու բարոյական և սոցիալական զարգացումների համար, 2. կարողանան ձևավորել համեմատական, քննադատական, վերլուծական մոտեցում, 3. կարողանան դիտարկել առակները որպես ազնվության,

	պատասխանատվության, հարգանքի և արդարության արժեքների ստեղծողներ, 4. կարողանան ճանաչել ազգային և համամարդկային առակների գոհարները արողանան արտահայտել սեփական դիրքորոշումը բարոյական և արժեքային հարցերի շուրջ:
Հնարավոր հետագա ազդեցությունը, վերջնարդյունքի կիրառելիությունը այլոց կողմից	Լրացուցիչ ուսումնական ռեսուրսի ստեղծում ուսուցիչների և սովորողների համար: Նախագիծը կտրամադրվի դպրոցի գրադարանին՝ որպես ուսումնական նյութ:
Նախագծի նկարագիրը (ժամանակացույցը)	**1-ին փուլ- Հիմնահարց (հոկտեմբերի 7)** **ուսուցչի գործունեությունը՝** ներկայացնել նախագծի թեման, առաջարկել հիմնահարցը և ձևակերպել նպատակներն ու խնդիրները **սովորողի գործունեությունը՝** իրականացնել հիմնահարցի նպատակների և խնդիրների ընկալում **2-րդ փուլ- Պլանավորում/ նախագծում (հոկտեմբերի 14)** **ուսուցչի գործունեությունը՝** կազմակերպել նախագծի գործունեությունը, բաշխել սովորողների դերերը, քննարկել նախագծի ներկայացման հնարավոր տարբերակները **սովորողի գործունեությունը՝** իրականացնել աշխատանքի պլանավորում և բաժանում, ընտրել ներկայացման հնարավոր ձևերը **3-րդ փուլ-Որոնում** **(հոկտեմբերի 28)** **ուսուցչի գործունեությունը՝** տրամադրել խորհրդատվություն, հսկել սովորողների աշխատանքը, տալ նոր գիտելիք, կատարել պրեզենտացիայի փորձեր **սովորողի գործունեությունը՝** աշխատել ինքնուրույն, յուրաքանչյուրն իր դերով, խորհրդակցել իրար հետ, գտնել նյութեր ներկայացման համար **4-րդ փուլ- Պրեզենտացիա (նախապատրաստում)** **(նոյեմբերի 11)** **ուսուցչի գործունեությունը՝** կատարել դիտարկումներ, տալ խորհուրդներ, պատրաստվել նախագծի պաշտպանությանը **սովորողի գործունեությունը՝** վերլուծել տեղեկությունները, կատարել հետազոտություններ, աշխատել նախագծի վրա, պատրաստվել պաշտպանությանը **5-րդ փուլ- Ծնորհանդես (հանրային ներկայացում)** **(նոյեմբերի 18)** **6-րդ փուլ- Ծնորհանդես (հանրային ներկայացում)** **(նոյեմբերի 20-24ը)** **ուսուցչի գործունեությունը՝** լսել, հարցեր տալ սովորողներին, ուղղորդել, գնահատել նրանց կատարած աշխատանքի որակը **սովորողի գործունեությունը՝**

	ներկայացնել ուսումնական նախագիծը հանրությանը, մասնակցել հանձնաժողովի քննարկմանը
Կարողունակություններ, որոնք կզարգանան այս նախագծի ընթացքում	● Սովորել սովորելու կարողունակություն ● Լեզվական գրագիտության կարողունակություն ● Թվային և մեդիա կարողունակություն ● Մշակութային կարողունակություն
ՈՒսումնական նախագծի հիմնախնդիրը և մարտահրավերային հարցեր	● Առակների ժամանակակից ընկալման պակաս, միշտ չէ, որ սովորողները կարողանում են բացահայտել և ճանաչել առակների իմաստային խորությունը, ● Առակների բարոյախրատական գաղափարի ընկալման դժվարություն, առակի ենթատեքստը և դաստիարակչական հենքը երբեմն հասկանալի կամ դժվարըմբռնելի են տարբեր տարիքային խմբերի համար, ● Համեմատական վերլուծության բացակայություն (սովորողները հազվադեպ են համեմատում հայ և օտարազգի առակները, հակառակ դեպքում կհասկանային, որ առակի նյութը խիստ համամարդկային է) և ուսումնական գործընթացում առակների կիրառման պակաս, այնինչ առակները մշտապես եղել են լավագույն միջոցը՝ ասելիքը հասցեակետին դիպուկ և անվրեպ հասցնելու, ● Առակների արդիականացում, առակները չեն կապում իրենց կյանքի իրական իրավիճակներին, ● Ստեղծագործական մտածողության զարգացում ● Արժեհամակարգային դաստիարակություն ● Թվային հարթակների օգտագործում
Խմբին տրվող առաջադրանքներ	● գտնել և ուսումնասիրել հայ և համաշխարհային գրականության մեջ առակագրության կարևոր էջերը, դեմքերն ու թեմաները ● պատրաստել սահիկաշար նյութի վերաբերյալ ● կազմել ուսումնական նյութ (գրքույկ)
Միջառարկայական կապեր	հայոց լեզու, պատմություն, արվեստ, հոգեբանություն
ՈՒսումնական նախագծի ավարտուն արդյունքի (պրոդուկտի) ներկայացման տեսակը	**Համեմատական վերլուծական զեկույց, փոդքաստ, որն իր մեջ ներառելու է** **1.Առակների ժողովածուի ստեղծում (թղթային և էլեկտրոնային)** **2. Վերլուծական զեկույց** **3. Նկարչական ցուցահանդես, առակների իմաստը ներկայացնող նկարներ, կոլաժներ՝ կցելով առակի կարճ բարոյախոսությունը**
ՈՒսումնական նախագծի վերջնարդյունքների ներկայացման տեսակներ	սահիկաշար, գրքույկ
Հետազոտության աղբյուրներ	համացանց, գրադարան

Խմբի գործողությունները				
1-ին խումբ	**Խմբի անդամները**	**Անելիքները**	**Նախատեսված ժամկետները**	**Կատարման ժամկետը**
1	**Եսայան Սոնա, հետազոտող**	**Հոգևոր առակներ: Ուսումնասիրել հոգևոր հնագույն առակները՝ դիտարկելով դրանք որպես մարդկային արժեհամակարգի ձևավորման կարևորագույն միջոց:**	**14.10-28.10**	**28.10**
2	**Ադաշյան Յուլյա, հետազոտող**	**Ուսումնասիրել Իվան Կռիլովի առակներն ու դրանց բարոյախոսությունը, կազմել վերլուծական աշխատանք, ներկայացնել էլեկտրոնային և թղթային կրիչներով՝ օգտվելով համապատասխան գրականությունից և համացանցից:**	**14.10-04.11**	**04.11**
3	**Սարուխանյան Էլմիրա, հետազոտող**	**Ուսումնասիրել Մխիթար Գոշի առակներն ու դրանց բարոյախոսությունը, կազմել վերլուծական աշխատանք, ներկայացնել էլեկտրոնային և թղթային կրիչներով՝ օգտվելով համապատասխան գրականությունից և համացանցից:**	**14.10-04.11**	**04.11**
4	**Կարապետյան Անուշ, հետազոտող**	**Ուսումնասիրել Եզոպոսի առակներն ու դրանց բարոյախոսությունը, կազմել վերլուծական աշխատանք, ներկայացնել էլեկտրոնային և թղթային կրիչներով՝ օգտվելով համապատասխան գրականությունից և համացանցից:**	**14.10-28.10**	**28.10**

5	**Պաբլոյան Էրիկ, հետազոտող**	**Ներկայացնել առակի ժանրային առանձնահատ–կությունները, կառուցվածքային և իմաստային նրբերանգները՝ օգտվելով համապատասխան գրականությունից և համացանցից: Պատրաստել սահիկաշար, էլեկտրոնային և թղթային կրիչներով ներկայացնել աշխատանքը:**	**14.10-11.11**	**11.11**
6	**Մանադարյան Միլենա, հետազոտող**	**Ներկայացնել մարդկային արժեհամակարգի նկարագիրը, տալ կրած փոփոխությունների համապարփակ նկարագիրը՝ օգտվելով համապատասխան գրականությունից և համացանցից:**	**14.10-04.11**	**04.11**
7	**Ալեքսանյան Արփինե, հետազոտող**	**Ուսումնասիրել Վարդան Այգեկցու առակներն ու դրանց բարոյախոսությունը, կազմել վերլուծական աշխատանք, ներկայացնել էլեկտրոնային և թղթային կրիչներով՝ օգտվելով համապատասխան գրականությունից և համացանցից:**	**14.10-11.11**	**11.11**